

Պ. ԿԱՐԱՊԵՏ ԶԱՔԱՐԵԱՆ

ԽՈՒՄԻՆ-ԻՆՆ ԱՐԱՐԱՍ ԽՈՒՄԻՆ

Նորին Գերարկուծին Աստրախանայ Հայ Կարապետ Զաքարեան պարոն Վալստեանցը՝ որ 1867 թուականին ընծայել էր մի հատ Հինգ տոկոսարեր բիլէթ մի հազար բուրլի զումարի յօգուտ Ծխական Հոգևոր Դպրոցաց, իւր ազգասիրական ջերմեռանդութիւնը վառ ունելով սրտումը և ցանկանալով նոր բացած Օրիորդական Հոգևոր Դպրոցին ևս նպաստ լինել նուիրագործութեամբ, կրկին ընծայեց մի հատ թագաւորական Հինգտոկոսարեր բիլէթ 1861 թուականի համարաւ 46694՝ զումարաւ մի հարիւր բուրլի արծաթի միամեայ տոկոսիքովը. վասնորոյ Հոգարար-ձութիւնը յայտնելուց յետոյ յիշեալ Վալստեանցին իւր կատարեալ զոհունակութիւնը, խնդրում է Խմբագրութիւնից՝ Ար-բ-ր ամսագրոյ միջոցաւ հրատարակել նախալիշեալ անձի ազգօգուտնուիրագործութիւնը ի յորդոր բարենախանձ համազգայնոց:

Հոգարարձութ.

(ՍԽՈՒՄԻՆ-ԻՆՆ)

Համար 7

25 յունիւնի 1871 թ.

ՍԽՈՒՄԻՆ:

Այս աւթիւ խմբագրութիւնս ևս կը փութայ յատկապէս յայտնել իւր շնորհակալութիւնը առ նորին բարեսիրտ Յարգութիւնն Պ. Կարապետ Զաքարեան Պ. Վալստեանց:

ՕՐԻՈՐԴԱՆ ՀՈԳ. ԴՊՐՈՑ

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՑ

ԽՈՒՄԻՆ-ԻՆՆ ԱՐԱՐԱՍ ԽՈՒՄԻՆ

Մեր Աղէքսանդրապօլու քաղաքի համար այս յունվար ամսոյ 30ին բարեկոյս ապագայի վերաբերութեամբ մի ուրախառիթ հանդիսակատարուած տեղի ունեցաւ, որոյ հրատարակութեան

տարիոգը ամենայն Հայասէր հոգւոյ մէջ զուարճութեան քաղցր զգացմունք զարթեցնելու է անշուշտ, եթէ բարեհաճի խմբագրութիւնդ Արարատայ պատուական էջերու մէջ տեղաւորելու զայս: Արդէն ի լուր սիրելի համազգեաց տարիողած են ազգային լրագիրք Երկայնարագուկ Արդութեանց առ Տէր հանգուցեալ Ղահրաման Իշխանի ազգօգուտ և բարենպաստակ զոհարեութիւն քաղաքիս մէջ օրիորդաց մի դպրոց հիմնելու դիտաւորութեամբ. որոյ կարեւորութիւնը զգալի էր ի վաղուց: Անհամբեր սրտով կսպասէր Աղէքսանդրապօլու զոյն դպրոցի բացման զուարճարար ժամուն, և ահա վերագրեալ ամսամիտոյն մէջ զայն տեսնելու և շնորհաւորելու բաղղաւորութիւն ունեցաւ հետեւեալ կերպով:

Առաւօտեան ժամու 11 սուրբ Պատարագը արդէն սկսուած էր նորակառոյց Սուրբ—Նշան եկեղեցւոյ մէջ, որոյ շինութեան ծախուց համար առատաձեռնել էր արժանաշիշատակ հանգուցեայն իւր կենդանութեան ժամանակ մի բաւական մեծ գումար զրամոց. ներկայ էին այնտեղ բաւականաչափ ժողովուրդականք, օտարազգի հոգևորականք և քաղաքական և զինուորական աստիճանաւորք, որոնք հրաւիրուած էին յատկապէս: Պատարագի ժամանակ կարդացուեցաւ Վեհափառ Հայրապետի սուրբկոնդակն, որով կարգել էր ի պաշտօն Փոխանորդի Առաջնորդութեան վիճակիս զԱրժանապատիւ Գրիգոր Վարդապետ Աղափիրեանցն. որը և Առնդակից յետոյ խօսեցաւ մի ազգու ատենադրանութիւն ողջունելով զժողովուրդն: Արժանապատիւ Հօր ողջոյնը ընդունեցաւ ուրախութեան խորին զգացմամբ ժողովուրդի կողմից, որը աներկբայ ակնկալութեամբ կ'յուսայ, թէ մեծ ազգեցութիւն պիտի ունենայ բարեհամբաւ ուսումնական Հայրն իւր հովուութեան յանձնեալ հօտի բարոյական և մաւաւորական յառաջադիմութեան նկատմամբ: Պատարագը աւարտելուց յետոյ կատարեցաւ հոգեհանգիստ ի յիշատակ հոգւոյ առ Տէր հանգուցեալ բարերար Իշխանին Ղահրամանայ. յետոյ եկեղեցական դասը, ժողովուրդականք և օտարազգի հոգևորականք և աստիճանաւորք, որոց խմբի մէջ կային և մի քանի տիկնայք, զիմեցին միահամուռ յուսումնարանն օրիորդաց, ու

բոց հետ էին և տասներկու մատաղահաս Հայ աղջկունք բարեգործ իշխանի որդեղիրքն, միաձև հագնուած, որոնք և եկեղեցւոյ մէջ ժամերգութեան միջոցին կը շրջադառնէին կարգաւ հոգեհանգստեան սեղանը: Երբ հասան այնտեղ, մի սենեակի մէջ հաւաքուեցան պատուելի հանդիսականք և որպէսզի աղջկունք, զպրոցի օրհնութեան մաղթանքն սկսուեցաւ, և մի յարմարաւոր տեղ ընդմիջելով զայն Արժանապատիւ Հայրն զեկեղեցի ատենախօսութեամբ շնորհաւորեց նորաբաց զպրոցը բարեմաղթելով յաստուծոյ նորան յառաջագիմութիւն: Ապա Վարդուհի Տիկին Գիւլումեանցն ընթերցաւ մի յարմարաւոր ծառայող առարկայի վերաբերութեամբ: Հուսկ յետոյ տեղւոյս հոգեւոր զպրոցի Գերյարգոյ Տեսուչն Պ. Բէկ—Նազարեանց խօսեցաւ մի ազգու ատենաբանութիւն բացատրելով այնու օրիորդական զպրոցի իսկական նշանակութիւնը և նորա կարեւորութիւնը զաստիարակութեան նկատմամբ: Յետոյ բոլոր հանդիսականք հրաւիրուեցան մի ուրիշ սենեակ, ուր պատրաստուած էր նախաճաշիկ: Սեղանի վերայ Արժանապատիւ Հայրն բարեմաղթեց յաստուծոյ երկար կեանք ամենողորմած և ինքնակալ Պայտերն ամենայն Ռուսաց Ալէքսանդր Նիկողայեւիչի, և Աւհարատ Ազգասէր Պաթուղիկոսի ամենայն Հայոց Տեսուչ Քէորդայ Գի, հանդիստ հոգւոյ արժանաշիշատակ իշխանին՝ և յառաջագիմութիւն նորաբաց զպրոցին Աղջկանցս՝ զատարկուեցան բաժակներ միեւնոյն բարեմաղթութիւններով, և յետոյ մեկնեցան պատուելի հանդիսականքն: Արդարեւ մի նշանաւոր ցնծառիթ օր էր այդ օրը մեր քաղաքի համար, որոյ մէջ պարունակուած կար մի բարեյոյս և գեղեցիկ ապագայ: Իգական սեռի կրթութեան առաջին քայլը եղաւ այսօր մեր քաղաքի մէջ. ժամանակի բարեյաջող և ջանադիր հոգատարութեան կմնայ նորա շարունակութիւնը և յառաջընթացումը: Այդ կրթութեան սրբազան տաճարի մէջ պիտի ծանաչեն Հայ աղջկունք այն ամենայն պարտականութիւնքը, որ պիտոյ է գործադրել իւրեանց կեանքի մէջ: Ուսման կարեւորութիւնը ի վաղուց արդէն ճանաչուել է իգական սեռի համար ևս նոցանից բարեկիրթ և ուսնալ մայրեր պատրաստելու նկատմամբ, որոնք և այիտի

կրթեն իւրեանց երեխայից բնքուշ սրտերը, քանի որ նորա իւրեանց խնամոց և հոգատարութեան ներքոյ կգտանին, և այսպէս ամենայն մի ընտանիք բարոյական և մտաւորական վարժարաններ պիտի դառնան և հասարակական դպրոցների հիմն և նեցուկներ, այսու միջոցաւ զաստիարակութիւնն իւր իրական կէտի վրա հանգչելու դիւրին և արագընթաց պայմաններ կգտանէ: Այդ ուսման սերմերն թէ սերմանելու և թէ ընդունելու առանձնակի դժուարութիւնք կան, բայց և նոցա քաղցրաճաշակ պտուղների և արգասիաց բերքը այնչափ մեծ և օգտաւէտ են, որ շուտով մոռացում կըրերեն նախընթաց դժուարութեանց վերայ: Մարդկութիւնն այնտեղ միայն գտած է իւր իսկական նշանակութիւնը, այնտեղ միայն ընգունել է նա բարօրութեան ոսկիակապ թագն յիւր զուխը և ոսկեհուռ գաւազան իւր ձեռին, ուր որ զաստիարակութեան մշակութիւնն բարեպէս և հսկայաքայլ յառաջ կընթանայ, և արգասաւոր պտուղներ կծնանի, ուր որ հանճարոյ աստղը փողփողուն ծառադալմներ կճաճանչէ մարդկային մտաւոր հորիզոնի վերայ, և բարեհամբոյր ազդեցութիւններ գործելով նոցա սրտից մէջ՝ առաքինական զեղատեսիլ և անուշահոտ ծաղիկներ կբուսուցանէ ի հոտոտումն ընդհանուր մարդկութեան: Ծշմարիտ զաստիարակութեան հիմը Աստուծոյ երկիւղն և բարոյականութեան զարգացումն է. այս ամենակարեւոր կէտը պիտոյ է ի նկատի ունենալ միշտ թէ տնական և թէ հասարակական զաստիարակութեան մէջ, ուստի և իւրաքանչիւր զպրոցի կառավարչութեան վերայ անհրաժեշտ պարտք կայ, որպէս զի նա իւր զաստիարակեալների յառաջագիմութեան համար այնպիսի ուղղութեան հետք և միջոցներ որոնէ, որոնք կարողանան այն զպրոցին առաջնորդելու դէպի ծշմարիտ զաստիարակութիւնը, սորա մէջ է իրական օգուտը զաստիարակութեան: Մեր Աղէքսանդրապօլը օրիորդական դպրոց ունենալու բաղաւորութիւնը ժառանգեց. ապա Աստուած, որ դուրա մէջ թաղաւորէր ուղիղ կարգ զաստիարակութեան և Հայ աղջկունք բարոյապէս և մտաւորապէս կրթութեան անբաժան աջակցութեամբ մեր հասարակութեան ապագայ երջանկութեան հիմն լինէին. ապա Աստուած, որ բոլոր Աղէքսան-

դրապօլցի Լայպզիք սիրոյ և համաձայնութեան կենսագործ տարրը ի գործ դնելով այս օրիորդական նորարաց դպրոցի բարեկաւութեան համար հոգան և լցուցանեն այն բոլոր հարկաւոր պայմաններն, առանց որոնց մի գործնական օգուտ չի յուսացուիր դպրոցներէից. այն ժամանակը անշուշտ յառաջագէմ և բաղդաւոր ընթացք կունենայ դպրոցը և կը ծնանի մեր ապագայ սերնդոց համար բարեկիրթ և ուսնալ մայրեր, որով ապագայի համար կպատրաստուի այնպիսի մի երջանկութիւն՝ զոր վայելելու բազմն ի վաղուց յաջողած են ունենալ կրթութեան հետամուտ ազգերը, որով և իրաւի հրջանիկ են հանդիսացել նոքա պիտի: Մեծայայտ եմ, թէ այս յօդուածի Լայպսէր ընթերցողք ուրախութեամբ հոգւոյ շնորհաւորելով ինձ հետ այս օրիորդական Լայոց—Հոգւոր Ահհրամանեան—Դպրոցի բացումն՝ կըցանկանանորան յարատեւութիւն և յառաջադիմութիւն, և միանգամայն կրարեմաղթեն Աստուծոյ հանգիստ հոգւոյ Արդութեանց անմահանուն ազգասէր իշխանին, որոյ սոյն բարեգործութեան յիշատակը անջնջելի արձան հանդիսացոյց թէ՛ իւր մեծանուն բարեպաշտ տոհմի և թէ՛ Լայ ազգութեան պարծանաց համար:

ՅԱՆՆԷԱ ՄԱՐԴԵԱՆԵՅ:

Ի 4-Ն Փետրւարի 1871-մթ.
ՂԱԳԷՔԱՆԿԱՊԱՅՈՒՄ

(Հետեւեալ նամակը մեզ անյայտ պատճառաւ ուշ հասած է Խմբագրութեանս:)

Ս. ՓԲԿԶԱՎԱՆԻ Ի ԽԲԻՄ:

ԽՈՒՄԻՆԻ-ԵՆԷԱՆ ԱՐԱՐԱՌ ՄԱՍԿԵՐԵՅ:

Մեր երջանիկ Նախահարց քրիստոնէական ջերմեռանդ հոգւոյն նուիրական նշխարներէն մէկն է նաեւ Սուրբ Փրկչաւանից տաճարն՝ Խրիմ Թերակղզւոյ մէջ, որ Խարասուրազար քաղաքէն գրեթէ 12 վերստի չափ հեռաւորութեամբ մեծ ուխտատեղի է: Այս տարի նորա երրորդ ուխտին՝ որ կկատարուի անխափան Սուրբ Աստուածածնայ Աւերափոխման տօնին յառաջիկայ կիրակին, փառաւոր հանդէս կատարուեցաւ ուրախութեան մեր Խարասուրազար քաղաքի ժողովրդոց կողմա-

նէ, ի պատիւ և ի լրումն իննամեայ հաւատարիմ և արդիւնաւէտ Երեցփոխանական ծառայութեան նոյն Սուրբ Փրկչաւանից՝ Մեծարգոյ Երեցփոխանին Աղայ Յովսէփայ Պարոնեան: Սոյն հանդէսն առաւել ևս պայծառացաւ քանի մի երիտասարդաց ազգասիրական եռանդամբը, մանաւանդ Մեծապատիւ Աղայ Խաչուկ Եաղճիանի՝ որ միշտ նշանաւոր է ճանաչուած քաղաքիս ժողովրդոց մէջ իւր ազգասիրական և բարեպաշտական սրտեռանդն բարեմասնութիւններովն ու զգացմամբը: Նոյն հանդէսն սկսեց կատարուիլ առաջի օրուան զիշերային ժամերգութենէն յետոյ Սուրբ Փրկչաւանի լայնատարած բակին մէջ զանազան զուարճալի հրախաղութեամբք և մերձակայ լեռանց գաւթներուն և կողքերուն վերայ բազմութիւն հրաւառութեամբք, որուն՝ նոյն զիշերուան օրին պարզութիւնն ու խաղաղութիւնը՝ աւելի զհեղեղիկ փայլ մը տալով՝ մեծ զուարճութիւն կուտար ոչ միայն բարեպաշտ ուխտաւորաց սրտից, այլ նաեւ շրջակայ զիւղօրէից այլադաւան ազգաց. որք տեսանելով զիշերային այն փառահեղ լուսաւորութիւնները խուռն բազմութեամբ կդիմէին: Միւս օրն Սուրբ պատարագի աւարտելէն յետոյ մատաղատան մէջ ժողովրդոց կողմանէ կարգացուեցաւ ճառ շնորհակալութեան նոյն Երեցփոխանին՝ Խարասուրազարի ժողովրդոց և ուխտաւորաց կողմանէ. յետոյ ճաշէն արձակուելով բակէն դուրս հրապարակին մէջ սկսան դարձեալ զուարճանալ զանազան երաժշտական նուագարաններով, երգեցողութիւններով և ըմբշամարտութիւններով՝ զրեթէ բոլոր օրը, եւ ահա նոյն կարգացուած ճառըն ուղարկելով այսու ինդրածանոյց նամակովս՝ ինդրեմ Խմբագրութենէդ, որ բարեհաճի տեղի տալ իւր պատուական Արարատ ամսագրոյն էջերէ մէջ ի քաջալերութիւն բարերարաց Ազգիս և յօրինակ այլոց, թէ զիտէ մեր Ազգն ևս ըստ արժանւոյն դնահատել և պատուել իւր բարերար և արժանաւոր անդամները:

ՊԱՍԵՆ ԱՄԳ ԺԱԿԱՆԱՅ ԵՄԿԷՐԵԱՆԵՅ
ՊԱՐԺ ԱՐԱՐԱՌ ՄԱՍԿԵՐԵՅ:

9 Փետրւարի 1870-մթ.

Ի Խարասուրազար Տաւրիկեան Նահանգի: